Պատվաստանյութեր

Չափահաս տարեցների համար



Որքան մենք մեծանում ենք, այնքան մեր մարմինը դառնում է ավելի քիչ արդյունավետ մեզ ծանր հիվանդություններից պաշտպանելու հարցում: 65 տարեկան և ավելի բարձր տարիքի մարդկանց համար ավելի մեծ է այնպիսի հիվանդություններով հիվանդանալու վտանգը, ինչպիսիք են գրիպը, COVID-19-ը, թոքաբորբը և այլն: Բայց պաշտպանված մնալու միջոց կա՝ պատվաստանյութերը:

Պատվաստումներն անվտանգ, արդյունավետ և հեշտ միջոց են տարեց մարդկանց պաշտպանելու այնպիսի կանխարգելվող հիվանդություններից, որոնք կարող են հանգեցնել հոսպիտալացման և մահվան: Առավելագույն պաշտպանության համար անպայման ժամանակին ստացեք Ձեր պատվաստանյութերը: Խորհուրդ տրվող պատվաստանյութերը հիմնված են Ձեր տարիքի և առողջական վիճակի կամ առողջության պատմության վրա և կարող են պահանջվել Ձեր աշխատանքի կամ ճամորդության համար: Եթե չգիտեք, թե որ պատվաստանյութերն եք ստացել կամ որոնք են դեռ Ձեզ անհրաժեշտ, հարցրեք Ձեր մատակարարին:

Ո՞ր պատվաստանյութերի կարիքը ես ունեմ:

65 տարեկան և ավելի բարձր տարիքի անձինք պետք է ստանան հետևյալ պատվաստանյութերը.

- **Գրիպի դեմ պատվաստանյութ:** Սա պետք է ստանաք ամեն տարի, հատկապես աշնանը, որպեսզի նվազեցնեք գրիպով հիվանդանալու հավանականությունը: Եթե 65 տարեկան եք կամ ավելի բարձր տարիքի, հարցրեք Ձեր մատակարարին ավելի մեծ չափաբաժնով գրիպի պատվաստանյութի մասին:
- **COVID-19-ի դեմ պատվաստանյութ:** Այս պատվաստանյութը ժամանակ առ ժամանակ թարմացվում է՝ պաշտպանելու վիրուսի ամենանոր ենթատեսակներից: 6 ամսական և ավելի բարձր տարիքի բոլոր անձանց խորհուրդ է տրվում ստանալ թարմացված COVID-19-ի դեմ պատվաստանյութի առնվազն 1 դեղաչափ. 65 տարեկան և ավելի բարձր տարիքի չափահասները պետք է ստանան COVID-19-ի դեմ թարմացված պատվաստանյութի լրացուցիչ դեղաչափ՝ իրենց նախորդ դեղաչափից առնվազն 4 ամիս հետո.
- **Թոքաբորբի դեմ պատվաստանյութ:** Պաշտպանում է բակտերիական լուրջ վարակներից: Ձեր մատակարարը խորհուրդ կտա, թե երբ ընդունեք այն:
- **Գոտևորող որքինի (shingles) դեմ պատվաստանյութ:** Երկու դեղաչափից բաղկացած այս պատվաստանյութը տարեց չափահասներին պաշտպանում է գոտևորող որքինից՝ առավելագույն պաշտպանության համար ընդունվելով երկուսից վեց ամիս ընդմիջումով: Խորհուրդ է տրվում 50 տարեկան և ավելի բարձր տարիքի չափահասներին, նույնիսկ եթե նախկինում հիվանդացել եք ջրծաղիկով: Պարզեք Ձեր մատակարարից՝ արդյո՞ք Դուք արդեն ստացել եք մեկ դեղաչափից բաղկացած Zoster պատվաստանյութը:
- **Փայտացման, դիֆթերիայի, կապույտ հազի (Tdap) դեմ պատվաստանյութ:** Այս պատվաստանյութի մեկ դեղաչափը պաշտպանում է փայտացումից, դիֆթերիայից և կապույտ հազից: Դուք կարող եք խթանիչի կարիք ունենալ յուրաքանչյուր 10 տարին մեկ:
- **Շնչառական սինցիտիալ վիրուսի (RSV) դեմ պատվաստանյութ:** 60 տարեկան և ավելի բարձր տարիքի մարդկանց դեպքում մեկ դեղաչափը պաշտպանում է շնչառական սինցիտիալ վիրուսից (RSV):

Խորհրդակցեք Ձեր մատակարարի հետ՝ հավելյալ տեղեկությունների համար:

County of Los Angeles Public Health

Պատվաստանյութեր

Չափահաս տարեցների համար

Ինչպե՞ս ես պատվաստվեմ:

- Այցելեք Ձեր բժշկական մատակարարին կամ դեղատուն:
- Հարցրեք Ձեր մատակարարին՝ արդյո՞ք Ձեզ խորհուրդ են տրվում հավելյալ դեղաչափեր:
- Եթե չունեք մատակարար, այցելեք http://publichealth.lacounty.gov/vaccines ՝ անվճար կամ ցածր արժեքներով պատվաստման կլինիկաների ցանկի և պատվաստանյութերի մասին հավելյալ տեղեկությունների համար:
- Medicare-ը փակում է առաջարկվող պատվաստանյութերի մեծ մասի ծախսերը՝ առանց հաճախորդի գրպանից ծախսերի: Կապ հաստատեք Medicare-ի կամ Ձեր Medicare Advantage Plan-ի մատակարարի հետ՝ ավելին իմանալու համար, թե ինչ ծախսեր են փակվում ապահովագրությամբ: Տեղեկությունները հասանելի են https://www.medicare.gov/health- drug-plans/health-plans կայքում:
- Լավագույնն այն է, որ Դուք կարող եք պատվաստումների մեծ մասն անել միևնույն այցի ընթացքում:

Հանրային Առողջության զանգերի կենտրոն

Հավելյալ տեղեկությունների համար Հանրային Առողջության զանգերի կենտրոնը հասանելի է **1-833-540-0473** հեռախոսահամարով ամեն օր՝ առավոտյան 8-ից երեկոյան 8-ը՝ շաբաթը յոթ օր: